

# ԼԱՊՏԵՐ ԴԻՈՔԻՆԵԱՆ

Հ Ա Ն Դ Է Ս

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ Ա. ՇՐՁԱՆ

1888 ՄԱՐՏ 26

ԹԻԻ 17

## ԲՈՂԱՆԿԱԿՈՒԹԻՒՆ

Առ ընթերցողն . — Ազգային ան-  
տաթիւն . — Ազգային լուրեր . — Գիրքը-  
Հեղինակն այն կարծիքն Հայունեաց մա-  
սին . — Նշանախոտութիւնք . — Գիտցինէ-  
սի երազները . — Առաջի Իրողինեաց . —  
Աստուածաբանական . — Սէզ Սէօնակի :

## ԱՌԸՆԹԵՐՅՈՂՍ

Ես՝ Գիտցինէս, ըստերոզն նը-  
շանաւոր, ահա՛ վերջապէս դարձած  
երկար ուղեւորութենէս, զոր կա-  
տարեցի շուրջ զաշխարհաւ, որպէս  
ոմն ի մահկանացու այ՝ շուրջ զլուս-  
նով, կը խոստանամ վերստին զը-  
ուարճանալ և զուարճացնել զքեզ  
ո՛վ ազնիւ ընթերցող, պատմելով

քեզ ինչ որ անսայ մեծ ու պզտիկ  
լայն ու նեղ, հին և նոր, բարի ու  
չար և բարձր ու ցած . բայց չեմ  
մտնար կանխաւ ներողամտութիւնդ  
խնդրել այն ցաւոց համար, զոր կը  
փսինամ պատճառել, և այն հաճո-  
յից համար, որք՝ իրենց աստակու-  
թեանը պատճառաւ կրնան, մինչև  
աստիճան մը, — որպէս սովոր են ը-  
սել ազնիւ փոստաբանք — տարօրի-  
նակ ազգեցութիւն մը դպրացնել,  
որ կարելի լինի փաստակար դառնալ  
Չէ՞ մի որ ըսուած է թէ աստիկ  
ուրախութիւնն ալ ունի իր փրօսն,  
և չէ՞ մի որ իմ նպատակս ալ է,  
մէկ կողմանէ, մերթիւններն հար-  
ուածել, միւս կողմանէ ինդացնել  
անգրք քան զպոյն :

Արդ՝ անձամբ անձին՝ բարի գա-  
լուստ մաղթելով, որովհետեւ կը

վախնամ որ ուրիշ մը այդ պատիւը  
 Հհամարձակի ընել ինձ, աշխարհ  
 գժուարամատակի լինելով մեծու-  
 թիւնն, ահա՛ այս օրու ընէ կսկսիմ  
 շնաշխարհիկ Լապտերիս ըւտոյն մի-  
 շոցաւ տեսածներս ի գիր առնուլ  
 և քեզ հետ ի միասին զորմանալ,  
 սքանչանալ, հիանալ, խնդալ, քրք-  
 քիջ բառնալ, և, եթէ կը հաճիք,  
 խնդալէն ճաթիլ ի միասին :

Սակայն՝ նախ և առաջ, Աղբիւ-  
 ընթերցող, մտիկ ըրէ պայմաններս,  
 զոր կը ներկայացնեմ քեզ այս նա-  
 խարանով՝ ի փոխարէն աշխարհի ծա-  
 ուայութեանց, զոր խոստովանիմ  
 պատրաստ լինել մատուցանել հաղ-  
 ուագիւտ ընթերցասիրութեանդ :

ՊԱՅՄԱՆՔ ԳԻՈՂԻՆԵԱՆ ԼԱՊՏԵՐԻ

Դիող ինեուն Լապտեր տա այժմ  
 պիտի հրատարակուի շարաթը մի  
 անգամ, Շարաթ օրերը, ծաւալը  
 միջակ՝ 16 երեսներէ բաղկացեալ.  
 պարունակութիւնը Աղղային, Զա-  
 ւեշտական, Գննադատական, Բա-  
 լոյտական և զանազանք :

Այս պայմաններն ունեցող որ  
 և է յօդուած կամ դրութիւն կըր-  
 նան ընդունուիլ ի հրատարակու-  
 թիւն, բայց Հրատարակուածներն  
 ալ կը դատապարտուին ցիկանս  
 բանտարկութեան :

Շրջանը 60 թիւերէ կը բաղ-  
 կանայ :

Շրջանին գինն է ԿԱՆԻԻԿ 40  
 դահեկան :

Կիսաշրջանը 25 դահեկան :

Գաւառաց համար 30 դահե-  
 կան. գաւառներէն դրամի տեղ կըր-  
 նան բօսթոյնի լույս խրկել :

Օտար երկիրներու համար 12  
 Փրանդ :

Իւրաքանչիւր օրինակ ձեռքէ  
 կը վաճառուի 40 փարսոյի. չգնողք  
 ոչինչ պիտի վճարեն, իսկ անանք որ  
 ուրիշ գնողէ մը կառնեն կը կող-  
 դան, անտեսական բարձրագոյն գի-  
 տութեան պահանջած միակ պայմա-  
 նին՝ ինայադասիրութեան համար,  
 պիտի վճարեն ընթերցողական  
 զգացումնին, եթէ ունին, քիչ մ'ալ  
 խիզճ, սրոյ խառնուրդն պիտի  
 պատրաստէ այն շքնաղ ուղղանքը  
 զոր, կը յուսամ թէ, շատեր պիտի  
 դան միտուելու, և գժուարաւ պիտի  
 կրնան վերագնել, եւ անոնց համար  
 ալ, որ ոչ վճարմամբ և ոչ ձրի պի-  
 տի հաճին կարդալ, պիտի խնդրեմք  
 Բարձրըյն շնորհքն, և չսխտի մտ-  
 նանք մեր ազօթից միջ - սրպէս կը-  
 նեն տեսակ մը հօդեր - յիշել տ-  
 նոնց անուանքն, արտասուել տ-  
 նոնց համար, քանզի (պրեթէ) կար-  
 սուած են, և մանաւանդ անպղտյ  
 են իրենց կորստեան : Ո՛հ, օտակա-  
 լի է այս վիճակն, յորմէ զմեզ գա-  
 մենեոին ազատ պահէ Տէրը, ամէն :

Ա.ԶԳ.Ա.ՅԻՆ

Լապտերի երկարատեւ վակ-  
 ման միջոցին ազգային կարեւոր  
 շատ մը դէպքեր տեղի ունեցան,

զորս անգղական թեթևերն՝ հրատարակելով, ծանօթացուցին Հայ աշխարհին՝ Այդ դէպքեր, որք ուրախառիթ որք վշտացուցիչ, հարկ էր որ զգայող Հայ սրտերն յուզէր, որպէս և եղաւ :

Լապտեր՝ որ զգտու մասին - թէպէտ թուղթի կտոր մ'է ամեն թերթերու պէս, - միշտ գերազանց դանձուած է, անշուշտ անհունապէս սուտել վշտացած, որ բուժեան դատապարտուելովը չէր կրնար գիւրազգայ խրտին զգացուիլերն հնչուն բառերով յայտնել :

Ուստի այժմ՝ որ վերտտին լեզու կեպէ ո՛չ իրբու մանկիկ մը, այլ իրբու Չարարիա մը յետ ընդ երկար պապանձման, պիտի սկսի, և պիտի շարունակէ - թէպէտ շարունակութիւնն հայու մը համար սարսափեցուցիչ բան մը ըլլայ - մեղանի և տպագրական գրերու միջոցաւ իւր զգացու մեներն այդ դէպքերու մասին յայտնել թուղթի վրայ :

Սահայն ահա՛ հիմակուրնէ չը վարանիր բսել թէ՛ կուսակցութեան մը վերաբերելու համար չէ՛ որ ճշմարտութեան կողմը պիտի բռնէ և պիտի պաշտպանէ ինչ որ աւելի բանուօրն է : Ճշմարտութիւնն, որպէս և ստու թիւնն կուսակցութիւններ համարեքին զարմանալի չթուի, հիմա առաքինութիւն թէ մուլթիւն, կուսակցական գողտիւրներ կը համարուին, և արդարեւ ի՛նչ անպատուութիւն քան մարդոց որ և է մէկ գործն մուլթիւն համարել, կամ առաքինութիւն, որ ըստ

ինքեան չեն այլ ինչ, բայց ներքին համարմանց Բարէն, գործնականն :

Կրնայ ըլլալ որ յապագային, ստու թեան կուսակիցներ վշտանան մեր այս ազգութեանն, և թշնամիներ ունենայ Լապտեր, իցաւ իւր փտիկիկ սրտին, սակայն, հաւատացէ՛ք, թէ բոլորովին անփոյթ պիտի գանուի նա ամեն թշնամանոց առջև, և տպաւած պիտի կորի ամեն պարսկերու հանդէպ, որ իրեն կուզուին : Այս լիծակիս կրտսի՛ սկզբունքի տէր ըլլալ, և վերաբերած կուսակցութեան համար գլուխն իսկ վտանգի դնել, այսինքն է շահն, զի հիմակուան գլուխը, զոր ամեն կենդանի մարդ կը վայելէ, շահն է :

Սա՛ ալ պէտք է դիտուի որ այսպիսի թշնամեաց վշտանալ իսկ չպիտի անցնի մեր մտքէն, զի՛ մեզ պէս, հարկ է որ և ստու թեան կուսակիցն սկզբունքի տէր ըլլայ . ըսկողբունքէ սկզբունք ցատկելէ աւելի գէշ բան չկայ, մանաւանդ բնաւ սկզբունք չընդունելն՝ դէշէ վեր բան մ'է : Եթէ չէք հաւատար կարդացէ՛ք այդ ախտէն բանուող թերթն . ի՛նչ տխուր փիճակ, ի՛նչ տաղնապեալ կացութիւն . . . տանջանք յախտեանկան, յորմէ յայնժամ միայն կրնայ ազատիլ այն թերթ երբ զգաստանալով՝ կը փարի Լապտերի հաւատոց :



### ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ուրուրեանն Պէշիկթաշի գերեզմանատան խնդիրն ալ կը վերջանայ որպէս արժան է վերջանալ: Ամենայն Հայոց Հայրապետն կոնդակաւ մը կը յայտնէ իւր կամքն, և Աղզն սիրայօժար կը նստիք զայդ գերեզմանատուն իւր շտիրելի վեհագետին, որոյ հովանւոյն ներքեւ կազրին ամեն Հայ անդորր և ապահով:

Ոսկերտոտեաց փոխադրութիւնն պիտի կատարուի վաղ ընդ փոյթ պարտ ու պատշաճ յարդանօք:

\* \* \*

Ամեն Ս. Պատրիարք Հայրը անցէալ շարաթ առաւօտ Մայր եկեղեցւոյ Պէշեան և Լուսաւորչեան վարժարաններն այցելելով, միւթարական խօսքեր ուղղէց աշակերտաց՝ իրենց տեսչին մահուան համար: Այս առթիւ Ն. Ամենապատրութիւն ծանոցց թէ իրենց առժամեայ տեսուչ կարգուած է Մելիքեան Մկրտիչ էֆէնտի:

\* \* \*

Ուրախութեամբ կիմանանք թէ Եալովայի մէջ վերջերս սկիզբն առած կաթողիկոսութեան յարելու փափաքն անհետացեր է: Կրօնափոխք վերատին Հայաստանեայց եկեղեցւոյ գերկը գարձած են շնոր-

հի անխնջ Նիկովիոյ առաջնորդ Գեր. Ստեփան եպիսկոպոս Յովակիմեանի:

\* \* \*

Կրօնական ժ. գով. Կրօնական թերթ մը հրատակելու համար կադմսժ վարչական խորհուրդը կարեւու դաս մը կառնէ այս օրերս իրեն յանձնուած խնդիրներն ըստ կարելոյն շուտով կարգադրելու և գործի սկսելու: Պ. Թորոս Զուլպալեցւոյ, ընտիր ատուած արանին նախաձեռնութեամբ յեկեղեցի Հայաստանեայց անուն կրօնական շարաթաթերթ սկսաւ հրատարակուիլ:

\* \* \*

Վանայ Պատրիարքական Փոխանորդ Ալէաթեան Գեր. Գրիգորիս եպիսկոպոս իւր անձնական տիրութեան պատժաւաւ դարձեալ հրաժարան զրկած է ի Պատրիարքարան և Թախանձաղին խնդրած որ Աղզ. Վարչութիւնն ընդունի զայն:

Խառն ժողովը մերժեց Նորին Սրբազնութեան հրաժարականը:

\* \* \*

Բերայի քարոզիչ Արժ. Ներսէս վարդապետ Արարմեան՝ Տրապիզոնի պատրիարքական փոխանորդ կարգուեցաւ:

Գեր. Գարեգին եպիսկոպոս Սըբուանձտեանց չարգէն հասած է ի Պոլիս, և պիտի կոչուի ի քարոզչութիւ Մայրաքաղաքիս կարեւոր թաղի մը եկեղեցւոյն:

Մայր եկեղեցւոյ թաղ, Խորհ, նորոգ ընտրութիւնն կատարուելով՝ հետեւեալ Մեծ. Տեարք յիշեալ Խորհրդոյն անդամ՝ անդամ ընտրուեցան.

1. Անտն Սեթեան
  2. Գարրիէլ Փափաղեան
  3. Գրիգոր Մարգարեան
  4. Համբաձուժ Գաւանդեան
  5. Մկրտիչ Ինճէեան
  6. Մկրտիչ Ռ. Կունեան
  7. Յակոբոս Նարկիլէճեան
  8. Յարութիւն Շէքերճեան
  9. Յովակիմ Ֆէնէրճեան
  10. Պօղոս Աֆէեան
  11. Սիմն Հանչերեան
  12. Սահփան Քեօսէեան
- կարողութիւն կը մտղթեմք:

\* \* \*

Ամեն Ս. Պատրիարք Հայրն՝ ըստ միաձայն յարտարութեանն չարեքշորթի առւր Խառն Ժողովոյ, կոյս. կառավարութեան գթելութեան գթութիւնը պիտի հայցէ ոստիկանութեան պաշտօնատրւնը փոխադրուած հոյ ձերբակալելոյ վրայ, որք են Սարբեան Մկրտիչ Եֆէնտի և վեց վանեցիներ:

Գ Ի Ր Թ Ը

Կրնամ յիշել թէ երբ հաղի վեց տարեկան էի, շատ անդամ

մօրս քով կը վազէի և կաղաչէի զինքը, որ ինձ պատմութիւն ըսէ:

Սիրելի մայրս, որ բնաւ ինձան բան մը չէր ինայեր, ըսաւ որ մը «Աստուած Արրահամին հաւատաքը փորձելու համար ըսաւ նմա թէ քու սիրելի որդիդ՝ Խահակը ինձ զոհ պիտի մատուցանես. Արրահամ նահապետ առանց վարանման՝ օր մը փայտեր բեռուց իշուն և ելաւ լեռը, յետոյ երբ Խահակ կը հարցնէր նմա թէ, հայր, ամեն բան ունինք բայց ողջակէզը չունինք Արրահամ պատասխանեց, Աստուած զքեզ ողջակէզ կը խնդրէ, այս ըսելուն պէս խնդրին կը որդւոյն թեւերը ու ոտքերը կապեց, Խահակ կը հնազանդէր, չէր տրտնջար բնաւ, և յետոյ մէջքէն հանեց իւր սուրը և երբ Արրահամ իւր որդին պիտի մորթէր, Աստուծոյ հրեշտակը անոր թեւէն բռնեց ու չթողուց, և իր որդւոյն տեղ ծառէն կախուած ոչխար մը ցցուց: Երբ մայրս իւր պատմութիւնը լսնցուց հետաքրքրութեամբ մ'ըսի մօրս թէ, միթէ՞ տեսած ես Արրահամ Նահապետը:

— Ո՛հ, ոչ. պատասխանեց նա. շատոնց ի վեր մեռած է Արրահամ:

— Բայց, ըսի, ուրիշ գիտես թէ նա ինչեր ըրաւ:

— Իրքի մը մէջ կարդացի, ըսաւ մայրս:

Ո՛րիչ օր մ'ալ մայրիկս պատմեց, գողիացի Ժանտարդ անունն երխտասարդ հովուհւոյն գիւցաղ-

նութիւնը, ըստ նա, աւելի սիրտ ունեցաւ ժանտարգ, քան այն ատենուան էրիկ մարգիկ, օգնութեամբն Սասունոյ պառտեց զԳաղիա թշնամեաց ձեռքէն, որ կռուելու եկած էին ի Գաղիա, որուն տեր ըլլալ կը փափաքէին:

Երբ աւարտեց մայրս իւր պատմութիւնը, հարցուցի իրեն. թէ արդեօք ժանտարգը տեսած է ինք:

— Ո՛հ, ոչ պատասխանեց, ժանտարգ մեռած է շատ ատենէ ի վեր:

— Հապա, ըսի, ի՞նչպէս գիտես թէ նա ի՞նչ ըրաւ:

— Գրքի մը մէջ կարդացած եմ:

Ուրիշ որ մ'ալ մայրս պատմեց ճամբորդի մը պատմութիւնը, որ մեծ նաւերով ծովերու մէջէն ճամբորդութիւններ ըրած էր, ճամբորդը երկիր մը հասեր էր, ուր գետինը աւաղ էր, հոն սեւամորթ մարդիկ կը բնակին եղեր, և չորքտանի խոշոր կենդանիք կը գրտնուին, որոց կռնակը կուզեր կան: Նաեւ գեղեցիկ ծառեր, որ կաթի պէս անուշ և ճերմակ հիւթերով մի պտուղներ ունին, և ուրիշ ինձ համար շատ մը հետաքրքրական բաներ:

— Նորէն հարցուցի մօրս:

— Մայրիկ, այդ երկիրները դացած ես:

— Ո՛հ, ոչ պատասխանեց մայրիկը, շատ հեռու են:

— Հապա, ի՞նչէն գիտես թէ

հոն այդպիսի բաներ կան, (ամէն մէկ հարցմանս ատեն, առջի ընդունած պատասխաններս կը մոռնայի):

— Գարձեալ, ըսաւ մայրս թէ գրքի մը մէջ կարդացի:

Օր մը երբ մայրս տնէն դուրս ելաւ, առանձնութենէ ձանձրանալով, մանաւանդ մտածելով թէ չըկայ քովս մէկը որ ինձ պատմութիւններ ընէ, ըսի ինքնիրենս, քանի որ մօրս գեղեցիկ պատմութիւնները գրքերու մէջ կը գտնուին, կրնամ գտնուիլ դանալ նոցա մէջ անոնցմով գրօմուլ:

Գացի գրտակայնին վրայէն դիրք մ'առայ և զայն բացի. . . ի՞նչ տեսեմ. . . ոչ ի՞նչ, միայն պզտիկ սեւ նշաններ ճերմակ թղթի վրայ:

Գոյեցի զայն, և անոր մի ուրիշ կողմը բացի, նորէն ճերմակ թուղթ և սեւ պզտիկ նշաններ, գրքին երեսները գարձուցի, թըղթապեցի, բայց սխիզրէն մինչ վերջը մի և նոյն բանն էր:

Տեսներով որ բան մը չը պիտի հասնում գիրքը սեղանին վրայ նետեցի բարկութեամբ մը և կը կարծէի թէ միայն ես եմ որ չեմ կարող հասնուլ. առանձնութենէ ձանձրացայ ընկեր չունէի, թուշու նշս ալ չէր երդէր՝ քնացայ սպասելով մօրս գալստեանը:

Երբոր սիրելի մօրս ներս մտնելը լսեցի անմիջապէս ոտքի ելայ և անոր առջեւ վաղեցի և ըսի:

— «Մայրիկ, ի՞նչ պէտք է ընել խնամալու համար քու պատ-

մութիւններդ, չոր դրբիդ մէջ կը  
դանուին : »

— Տղաս՝ արտասխանեց մայրս  
ԿԱՐՊՈՒ ԱՌՐՎԵԼՈՒ Է :

Ասոր վրայ միաքս դրի կար-  
գալ մտրվելու աշխատիլ :

Տղայք, բնեցէք և հետեւեցէք :  
Ք.

ՀԵՂԵՆՈՒ ՀԻՈՑՆ ԿԱՐԾՐԻՔՆ

ՀԱՅՈՒ ՀԵԱՏ ՄԱՍԻՆ

Ասիկ մի քանի տիւններ յառաջ  
փեմմութեան լայնածառալ լրագրոյ  
միջոցաւ Այն երեսան Յունարէն թեր-  
թէ մը թարգմանութեամբ արտատրու-  
ած — այս բառերն արդի աշխար-  
հարտին կը պարտինք — մէկ յոգ-  
ուածն է՝ զոր հեղինակն հի մը հրատա-  
րակութեան տուած էր, հայու հեաց  
մասին իւր կարծիքն յայտնել ազե-  
լով, բարձրովին սխալ ու մտացածին  
բացատրութեանք լի լինելով, ան-  
շուշտ թարգմանչին Յունարէն լեզ-  
ուի մէջ ունեցած բարձր արժան-  
եացք, այսինքն է, անհմտութեանը  
պատճառաւ, կը փութամք տտա-  
նոր անոր ճշգրիտ մէկ թարգմանու-  
թիւնն հրատարակել ի պատիւ և  
ի փառս մեր բաղմախալ և անմասն  
յունացիաութեան, որ արդէն իւր  
արժանաւոր համբաւն կը վայելէ այն  
ամեն հայ անհամարու առջեւ, որ  
սկսած են կախաղել « քալի մէքաւ :

քերիէն, և քալի սքերա, քերիան

Վերկար տառն Բերա անցուցած  
բլլալով, սրպէս մի քանի հասարա-  
կութեանց, նոյնպէս Հայ կանանց  
մասին հմտութիւններ քաղեցի, կամ  
ժողկաքաղ բրի, զորս ահա՛ այսու  
դրոյս կը փութամ՝ հրատարակու-  
թեան տալ պատուական լրագրոյդ  
միջոցաւ :

« Հայ հասարակութիւնը, որ  
արդէն ծանօթ է Յունաց իւր թան-  
ձր խառարի մէջ պարտիակալ պատ-  
մութեամբն, զոր միայն իրենք կը  
պատմեն ունեցած բլլալ, այս Հա,  
հասարակութիւնը կրտմ, հաւա-  
ասցէք խօսքիս, կիներ ալ ունի,  
որ արտաքին երեւութով, ճիշդ-  
մեզ պէս կիներ են. սակայն անոնց  
մտաւոր, բարոյական, հոգեկան,  
ընկերական և ընտանեկան փնձակն  
կարի ասարեր է մեր կանանց այս  
տեսակ (ական) վերջաւորող բառե-  
բու փնձակէն, օրինակի համար  
առնենք անոնց քիթն, որ անտե-  
սագիտական տեսակէտով շինուած  
չէ : Եթէ ձմեռ ատեն քիթերու  
մաշտակ հագցնելու նորաձեւու-  
թիւնը, որ խնդրոյ նիւթ եղած է  
այս օրերս մեր բարձր ակումբնե-  
րուն մէջ, վերջնականապէս ընդուն-  
ուի, ծանր ծախսոյ դուռն պիտի  
բանայ Հայ հասարակութեան մէջ,  
որ արդէն այս տեսակ աւելորդ ծա-  
խոց պատճառաւ խռովեալ է բա-  
ւական : Իւ արդէն սիրային գոր-  
ծաւնութեանց մէջ ալ մեծ ար-  
դելք են այդ — բաւ իրենց կարծ :

եայ - պատուական քիթերն, մենք որ դիտովին կամ յոտից ցղուխ սիրային աղբ մ'ենք, որպէս կը վիպեն մեր արդի և անցեալ կեանք մեր հրաշալի Առաջիկին մանաւանդ իւր կիւրճիտան ժանկիկով, շենք կըրնար հաշտ աշօք դիտել ասանց քիթերն:

Անցնինք, Հայուհին փափուկ կրնայ ըլլալ թէպէտ, եթէ ջանք տարուի, սակայն բնական կոպտութիւն մը կայ անոր բոլոր ընթացից վրայ, որ ամբողջ ասիական է, իրաւ է որ մենք ալ Ասիոյ մէջ կիներ ունինք, բայց անոնք օձի պէս ամեն տարի շապիկ կը փոխեն: Հայուհիք ոչ փափուկ եամբ չկը խօսին, և ոչ փափկակեր են. զօր օրինակ, եթէ բան մը հարցնես, հաւանութեան համար «հա՛» կը դարձածեն, ուրիշ բան է և կարի փափուկ մեր «մոյիսթա», կամ, «վէվէ» են. բառերն: փափկոկեր չեն ըսի, հաստատեմ, այն սեժ պահաց ապաշխարանայ հետեւորար և սիրոյ օրերն փոխանակ մեզ պէս կորմիր պատուական խաւեայն ուտելիք ընարելու, տեսակ մը բան կուտեն, որ կարելի չէ անոր նմանող բան մը գտնել, զոյն կը կոչեն Նօհուտ-թօխու, բայց իրաւամբ, օտարողգիք զայն էրմէնի-փանթիս-փանեարը կանուանեն:

Աշինչ կրնան սորվիլ, և օտար վարժարաններ կը դիմեն, իբրև թէ օտար վարժարաններն նորէն ղլուխ պիտի ձուլէր իրենց համար, Աղջիկներն երբոր ամուսնան, դրեթէ

կը վայրենանան, իրենց ազգականներէն և ամուսիններէն զատ ոչ զոր կընդունին տունէն ներս, կատարեալ շինական բերդաքաղաքներ են անոնց տուներն. ընդհակառակը հեղեմահին, մորդասէր ի բնէ, վերջապէս՝ Հայուհին չգիտէ ամուսին տնտեսութիւն, ի զոր այն համակրելի Հոյք (\*) կը ջանայ ուսուցանել անոնց տնտեսագիտութիւն: Եւ Հայուհին չգիտէ նաև իւր ամուսնայն հետ վարուելու եղանակն, քիչերը անկողինէն, ցերեկը խոհանոցէն դուրս չելլեր, բայց չը գիտէ ոչ մին և ոչ միւսն արդիւնաւոր կայուցանել: Օրինակի համար, տունէք հայ երիկ մը, - բայց միշտ օրինակի համար, ըսածս սխալ չըմբռնուի. - տունէք Հայ երիկ մը որ իւր կնոջ փափկահնչիւն ձայնի մը կըսէ, սիրեցեալդ իմ, նազելիդ իմ: Գիտես այս պարագային Հայ կինն ի՞նչ կը պատասխանէ, չեմ, չեմ, չեմ, և կտրի պտան ի վեր ելլել, իբր թէ մամուկ ըլլար: Արդ ի՞նչ կզգայ խեղճ ամուսինը, որ քիչ շատ գիտուն է, որովհետև պարտած է Յունաստան, այցելած է Աթինայ, թերեւս գրած իսկ անոր փառայ և փառաորութեանց

(\*) Ո՞վ կրնար երեւակայիլ թի այս երեւելի տնտեսագէտը համբաւ և սէր դասած ըլլայ մինչև ի Յունաստան, մինչև ի խորս օրտից Հելլենուհեաց. որք այնքան փեմ են Մեր Գիողինեան շնորհուրութիւնք յօժարակամ կը մատուցանեմք այս համակրելի անտես գիտին

վերաբերութեամբ, ի՞նչ կրնէ այսպիսի ամուսին մը, որ մանաւանդ զգայուն է, նախ կռիւ ապա կնաթողութիւն անշուշտ:

Ո՛հ, որչափ խօսիմ, այնչափ խօսելիք կայ, բայց ալ կործ պիտի կապեմ, և ներողութիւն կը խնդրեմ ի ձէնդ Պատ. Խմբագիր, որ արդէն այնքան երկարեցի այս աննշան նիւթն, Միակ փոփոք մ'ունիմ, այն է, յօդուածովս օգտակար ըլլալ Հոյ արանց. սրոց կրներն անշուշտ քիչ շատ կրնան բարւոքիւ սցապիսի յանդիմանահաններով:

Կրնայ լլալ որ լոյսածառալ լրագիրը դիմամբ սլալլած և փաղաբշականի դարձուցած ըլլայ Հելլենուհւոյն Հայուհեաց մասին դրած այս յօդուածն, յայնժամ քիչ մը իրաւունք ունեցած կը լլայ, և մենք անիրաւ գտնուած կըլլանք այդ յօդուածին թարգմանիչն Յունարէնի անտեղեակ ցուցնելով, բայց պէտք է որ ճշմարտութիւնը յայտնուի, և «ոչ»ն եթէ «այո՛», թարգմանել բանաւ որ է՝ այնպէս ընելու է:

Յաջորդ թուով Հայուհոյն Հելլենուհեաց մասին ունեցած կարծիքն և հաւատքը պիտի հրատարակեմք, զոր հինաւորց և խորագետ սատանայ մը կարող եղած է թարգմանել նոյնպէս բնագրէն, այսինքն Հայուհեաց սրտէն:

ՆՇԱՆԱԹՕՍՈՒԹԻՒՆԴ



Ա. Ապիկար Ամբակումեան՝ բնիկ Խաղիւղցի, արհեստ երբեմն գրաշար՝ ա՛յժ մ՛ փողոցի քարշարժերն համարող, ընդ օրիորդ Փամթաթիա Ամբաստղեան, ի կէտիկ բաշա (դրամձօժիտ երեք քարալանայ՝ սրոց երկուքը սուանց խաբախի, կարի սէլէ մը և 1880 ի տարեցոյց մը, Է. Մ. հնութիւնս):

Բ. Եղիա Հանէնտէեան՝ հայրենիք Թօփգափու, արհեստ մաշաճի ընդ օրիորդ Յամիկ Հայհաղեան յետիւզուլէ (դրամձօժիտ երկու շիշ Փրէնկիւզիւմի օշարակ, և վեց հատ մատէն դդալ):

Գ. Արամ կիւլմէզեան՝ Ղալաթացի, ուսանող բժշկաբանութեան ընդ օրիորդ Թաթիոյշա պատուրճեան, լանկա (դրամձօժիտ երկու տարիէն վճարելու պայմանաւ երկու հարիւր ըրուպլիէ սսիկ):

Դ. Փիլիպպոս Զընտանեան՝ իւսկիւտար, արհեստ տիրացու, ընդ օրիորդ Փերրոնէ պօմպաեան, վարժուհի, Գապաթաշ, (դրամձօժիտ վարժարանին նստիկին ծրագիրն և անվճար մնացած ամսաթոշակներն):

Ե. Մահուտի Խաչօ Գապակեօղեան (դ.աւ առացի) Սամաթիա, արհեստ նաւափար, ընդ օրիորդ Նէփրիկ Սուլուեան Յամաթիա, (դրա-

մօժխտ մօրը մահուամբ մահչիւլը  
դացած հազար կանգուն պօսթան  
մը, յարու՛մ կը բուսնէին երբեմն  
բնակը կազամբ և ընտրեցազոյն բը-  
րաստ:

ԴԻՈՂԻՆԵՍԻ ԵՐԱԶՆԵՐԸ

Ա.

Այսպէս Դիողինեսի պօլսոյ թա-  
ղերու մէջ երազով բրած պտոյտ-  
ներն պիտի հրատարակենք հետըզ-  
հետէ:

Աչերս փակեցի, քնացայ, և  
ահա՛ կը տեսնեմ:

Ժխոր, աղմուկ, յուղմունք,  
պտռտուկ, անէծք, հայհոյանք,  
կոծ և գանակոծութիւն, լաց և վայ-  
նատուն, ճիչ և աղաղակ, ասոնք  
մէկ կողմէն, լռութիւն և խաղա-  
ղութիւն, անդորրութիւն և օրհ-  
նութիւն, ողբքանք և քաղցրախօ-  
սութիւնք, զուարթութիւն և բերկ-  
րանք, երգ և ցնձղոյք, ասոնք ալ  
միւս կողմէն: Առաջիններն կը լռ-  
ուէին և կը տեսնուէին տարին ան-  
յուղած ամուսնացեաց բնակարան-  
ներէն, վերջինները՝ այն տուներէն  
որ երկու ձեռքեր միացնող քահա-  
նայն գեռ նոր գուրս ելած էր ա-  
նոնցմէ:

Այս տեսարանաց լուջեւ, յու-  
րաց մին աջս և միւսը ձախս կը  
դանուէր, երբ շուքրած միացած էի,  
վարանելով թէ որ կողմն բնարե-

լու և մանելու էր, լսեցի մեծաձայն  
աղաղակներ աջէս, որ կրսէին, հօս  
հօս, ո՛վ ազնիւ մարդ, ո՛ր Դիողի-  
նէս, հօս եկուր, հասիր, վերջ  
աուր մեր այս խառնութեանց: Հօ-  
ղիւ զարանցմամբ կը խորհէի թէ՛  
ինչպէս այս մըշտ կուռով պատաղ-  
եալ անձինք. որք անշուշտ Դիու-  
ղիւեան Լապտեր կարդացած չէին,  
լսած էին ազնուութիւնս, և հաշ-  
տարար բարձր կարողութիւններս,  
ահա ձախէս միւս խումբն սկսաւ  
դռչել, ո՛չ, ո՛չ, այս կողմ, այս կողմ,  
ո՛վ բաղմեքախա զուարճարանդ, ե-  
կու պարենք, երգենք, ցատկենք,  
խօսինք, խնդանք: այս կողմ, սի-  
րունիկ Դիողինես, նօնօշիկ Դիողի-  
նես: Բայց ես որսչեցի, շխտակը ք-  
սելու համար, աջս դառնալ, և  
մանել կուռարանն, ուր մրցանակն  
աւելի դժուարաւ կատարուի, և  
փառք՞ աւելի անհատանելի է:

Եւ ահա յիմնաւեայ, սպիտա-  
կահեր, կնճածաճախաւ և պարբե-  
րարար կատարի բայց սկսուն տիկին  
մը կը մօտենայ ինձ, և խնդիրն կը  
բայտարէ: Իւր ամուսինն որ ՁՅ ամ-  
եայ դեղերիկ երիտասարդ մ՛ էր,  
զինքը ալ չսիրել սկսած է եղեր,  
և կը կասկածի եղեր որ ուրիշի մը  
հետ յարաբերութիւն հաստատած  
լլայ:

Ռսկիներս կերած ատենը դե-  
ղեցիկ էի: կը պօռար, հիմա տղեղոյ  
ան ատենը սլղոիկ հիմա մեծ: Եւ  
տակաւին այնպիտի խօսքեր. և այն-  
պիտի կասկածներ, որ կին մը եր-  
բէք իրաւունք չունի դոյսցնելու:

որովհետեւ չկայ գրեթէ կին մը որ  
ինքզինքը հայելիին ցուցուցածին  
պէս տեսնէ :

Ինչ որ է, խնդիրը կտրուող-  
րել պէտք էր, դրան առջեւ էինք  
ականջս այդ բողբոջներուն, և աչե-  
րըս, պէտք է ճշմարտութիւնը խոս-  
տովանիմ՝, դիմացի ամեց պատու-  
հաններուն անկաժ որոյակ ալ հը-  
րաւիրուած էի :

Կրնաս երեւակել ընթերցող  
թէ արպիտի ծանր կայութեան մը  
մէջ կը գտնուէի, մէկ կողմս տշւն  
մէկ կողմս դարուն . լեզուով մէկ  
կողմին խօսելու է, աչքերով միւս  
կողմին : Բայց վերջապէս վարպետը  
վարպետ է, հաղիւ առջեւս կեցող  
բարեպաշտ տիկնոջ կրտէի . ոտանկ  
կանկածներ աւերադ է տիկին, կը  
դռուռնայի պատուհանարագմեալ օ-  
րհորդի մը գլխաւոր (\*) սղջոյններս  
մատուցանելու, և հաղիւ թէ ող-  
ջոյնս կանարաէի, կը վերադառնա-  
լի տիկինը մտիկ ընելու, որ կար-  
ծե՞մ թէ դործը կուհած էր, բայց  
չե՞մ յուսար, որովհետեւ ըստ .

Հա՛, դո՛ւն ա՛լ . . . է՛յ թա՛-  
մա՛մ . . . :

Այս խօսքէն ես սա՛ հասկցայ

(\*) Գլխաւոր, պէտք է իմանալ  
դիւրով, ըստ արդի հայկաբանութեան,  
նայեպէս թիչ մ'ալ առաջ յիշուած պա-  
տուհանարագմեալ ամականին դարմա-  
նալու չէ, կամքն ազատ է, ճաշակն ո՛չ  
միօրինակ . ուստի ինձ համար բացա-  
ռութիւն չէր կրնար ըլլալ, և ես իմ  
կամքիս և ճաշակիս հետեւեցայ :

որ, իբր թէ ըսել ողբեր հա դո՛ւն  
ալ դիտես կոր որ դիմացը հարանիք  
կար : Ուստի պատասխանեցի . Պա-  
տուհանինը հարան է կործեմ :

Հորց - պատասխաննիս աւար-  
ւարտելու չմնաց . ահա՛ սկսաւ ա-  
մուսինը պրտալ . բայց այս անգամ  
իրենց կուսոյն շարունակութիւնը չէր  
ի՛նչ կը յուսաս ունիւդիր էֆէնտի  
ուզգակի ինձ դէմ՝ բորբաքած էին .  
Անպիտան, սրիկայ, վաս, խայտա-  
ւտի, անպիտան, անպիտան . ևն .  
բայց ո՞վ ուշադրութիւն կրնէ ա-  
նանկ խօսքերու, ես աւելի մէկ  
կէտի մը ուշադրութիւն դարձու-  
ցած էի, այդ անձին ձայնին քաղց-  
րութեան . որ կործեմ կը թրթուար  
նուագարանի մը աղետաց նման, և  
կը խորհէի ինքնիրեն թէ, այս անձն  
երգերու ըլլար՝ պիտի վերացնէր  
զմորդ . երբ հայհոյելով կը դրա-  
ւէր :

Այս կարեւոր խորհրդածու-  
թեանս մէջ երկար չմնացի, որով-  
հետեւ ինձոյքի մը հրաւիրուեցայ,  
կուտէի այն բանէն, որ սովորաբար  
այսպիսի վայրէկաններու մէջ կուտ-  
ուի . այսինքն է՛ ծե՛ծ : Եւ Աստուած  
գիտէ եա՛մ մեռնելու մատ մը մնա-  
ցեր էր, որովհետեւ ինքզինքս  
պաշտպանելու կարող լինեալիս մէջ  
չէի, և Լազրեթս մարած, ինկած  
և կտոր կտոր եղած էր, այս՛, թիչ  
մնացեր էր որ գանակած մեռնէի,  
բայց ահա յանկարծ ինքզինքս դը-  
տայ պաշտպանեալ, ազատած և  
մարդասէր ուսերու վրայ վերջը-  
ուած . — Ի՛նչ կը խնդաք, կը կար-

ծէք թէ ուսերը մտորասեր չե՞ն  
 ըլլար. — Ի՞նչ եզամ էր. ահա  
 ճշմարտութիւնը. սիրամպիտ գրու-  
 ցիք, որոյ շնորհիւ անշուշտ այս  
 պատիւը կըլլար ինձ, բուն զոյ-  
 բութիւ դիմած, կառած և յաջա-  
 դած էին փրկել զիս :

Ահա անանց քօփս էի, շուրջս  
 բոլորում էին, սիլ փայրկեան, սիլ  
 փսեմս թիւն, սիլ ամենայն ինչ, ժը-  
 պիաներու մէջ, նայում քնքար  
 մէջ տեղ, քրքիջներու միջև. — այս  
 միջև բառը ուրիշ թերթէ առած  
 եմք չեմք ընդունելի գողութիւնը —  
 բերանս այն խօսք մը արտասա-  
 նելու, բերու թէ, բայց, հաւա-  
 տացէք թէ չգիտէի, ի՞նչ բերու-  
 բերանս բացի, դանկ բառ մը պի-  
 տի բռնի անշուշտ. թօհամբ բառ  
 մը դանկ, այլ ի՞նչ դժբաղդութիւն  
 այլ ի՞նչ փտտութիւնն սոս երազոյ  
 կողմանէ սոս դժբաղդ մահկանա-  
 ցուն, ահա կարթննամ. անիծեալ  
 արթնութիւն, ի՞նչ ազեկ պիտի ըլ-  
 լար, ի՞թէ միշտ քնանայինք, որ-  
 պէս կրտն հոյ կանայք, մեռելի  
 պէս . . . :

**ԱՌԱԿՔ ԴԻՈԳՐԻՆԵԱՅ**

Սէր, ցաւ և դրամ անկարելի  
 է որ գաղտակ մնան :

Չդուշոցիք կեղծաւոր հարսն  
 անտիտ աներձաղէ, շտտախօս գու-  
 ըննչէ, լեղուանի կնոյմէ, սանձար-  
 ձակ երկխաբէ, հիւանդ բժիշկէ :

լուս մարդէ, նոր պանդակէ, հին  
 թշնամիէ, անոյշ գիւնիէ ու կծանող  
 գրողիտէ :

Չհաչ զ շունէն և չխօսող մար-  
 դէն զբաշտելի :

Ղախցիք այն հաւէն՝ որ քու  
 տունդ կուտէ գարին և ուրիշի տուն  
 հաւելի՞ կածէ :

Նախանձը սիրոյ ժանտախոն է  
 և կասկածը բարեկամութեան քաղց-  
 կեղի :

Գայլին ախանջին կոչնակին ձայ-  
 նը միշտ «գառն դառն» կը լսուի :

Եթէ երիտասարդը գիտնար,  
 ծէրը կարենար ու ծոյլը կամէր՝ աշ-  
 խարհի վրայ անկարելի բան չէր  
 մնար :

Գօլէ՛ լեռն՝ այլ դաշտին վրայ  
 կեցիր. գօլէ՛ ծովն՝ այլ ցամաքէն  
 մի հեռանար և գօլէ՛ ամուսնու-  
 թիւնն՝ ալ դու ամուրի մնա :

Չիոյն յառաջակողմն, հրացա-  
 նին յետակողմն, սեղանին մէջ տեղն  
 իսկ կուոյ հեռաւորագոյն անդին  
 փափագելի են :

Կեր քու ախորժակիդ և հաղ-  
 ուէ այլոց ճաշակին համեմատ :

Ս.ՌՈՂՁՍ.ԲԱՆԱԿԱՆ

Ա:

ՈՒՅԵԼՅՔ

Կ'ուզէ՞ք առաջ մտաբանուանալ, հետեւ արար՝ կարողի միտք, հետեւ արար՝ հարուստ բարոյը կարող և հետեւ արար՝ երջանիկ բարոյ, հետեւ եղէք այս իրաւաներուն, թէն ըլլան ասանք խնայողասիրութեան հակառակ, Մէկ քարոզ երկու թրուշուն խիստ քիչ անգամ կը դարնուին. չկամ զմին ասիցէք, և զմեան սիրեցէք »:

Նախածաշի — Առաւել՝ երբոր կ'եղէք անկողնէն, պէտք է կաթի տեղ բնարէք աւելի գիւրամարս տակիքներ, օրինակի՞նչ ամուր, եթէ ձմեռ է, կարմիր խաւեարն. սեւ խաւեարը նշանակութիւն չունի իւր տխուր գոյնով, մանաւանդ որ կարմիր խաւեարն յունական չբառտիրակութեան համն և՛ հոտն ունի, և այդ հոտը մը համար շատ յարմար է: Կաթի գործածութիւնը հնութեան կարգ անցած է, և սրդէն հարկ ալ չկայ սնոր շափաղանց գործածութիւնը սա առտերութիւնն միայն՝ ունեցաւ, որ կաթնափառներն շուրթ տուներ չկամ խաւութներ չինեցին:

Սմառ ասեմն, իբր նախածաշ միրգերն գողելի են, որք և կ'օժանդակեն բժշկաց անհամեմատելի

ծառայութեանց: Այս իբրտ ամբ կըրնան առաւել վարանել, սեխ, ձմերուկ, և սննդարագ բեղին կեռաս, զոր քունի տակն՝ ազդասիրութեամբ կեռաս. կռատի նուեր լալ (ֆիշնէ), սրուն կարմիր գոյնը անասի մը ներկ է, որ զմարդ ներքին կարմէն կը ներկէ:

Նախածաշի մէջ կընայ գործածուել քացախ, ակարծակ լալաց առաջին գեղն, որուն բժշկական և ալ մէկ գարման կընայ հաստաբիլ, կընայ առաւել նուեր. հաստակ (փաթիլիճան), մեծ քանակութեամբ: Թիքեւս շատեր խնդան այս բանին վրայ, լայց շատ հին գիւտ մ'է այս, ո՛չ արաքէն փարիճան բարշապ և նոյն բանն է. քացախ և սկուռի: Մենք սոյն այս վիճակին մէջ տակ կառուարչիկէք, որ ստամբսի գրութեան խանդարում յառաջ չըլայ: Չմուսնաք ըսելու թէ նախածաշի ասեմն մարդ պէտք է որ առնուողն կէս հօխա հաց տակ (ֆիլոյի հաշուով), հիմակուան հացերուն համար այս զգուշութիւնն բանտար է, որովհետեւ պեժ հաց բսերով՝ օգ կամ հով կ'իմանանք, և ով որ օդ կամ հով շառներ կը մնասուի կրտարելապէս:

Ճաշ — Ճաշն սկսելու է, աղջիկ մանուկ մը, կէս հօխա կըտող դըլլոնճըդ միսի խորովոյցով, մանջ մանուկ մը նոյն քանակութեամբ մարեայ միտով, սուանց ուշագրտութիւն բնծայելու անկէ բարձր անոյշ հոտին, զոր ոմանք զգուսի կը

Համարեն : Պատանիք ուտելու են մէկ հօխա , երիտասարդք՝ երկու՝ չափահասք՝ երեք , ծերերը զերեկները բնաւ բան ուտելու չեն , որ շուտով մեռնին . որովհետեւ ծերութիւնը անկարող ըլլալով՝ անտանելի է նոյն իսկ իւր անձին : Երկու հօխայէ վար կըւող երիտասարդները՝ զգուշանալու են երկու հօխայ միս ուտելէ , որովհետեւ՝ եթէ այնչափ ուտեն՝ յայնժամ չորս հօխա պիտի կըռեն , և անոնք կարող չեն չորս հօխա ծանրութիւն վերցնելու : Հացի խնդրոյն դալով , զերեկուան ճաշին համար , մէկ հօխայէն մինչեւ վեց հօխա կրնայ ուտիլ անմիաս : Յաւարտ խորովածոյն , հարկ է ուտել առնուազն երեք տեսակ կերակուր եւս . մեծ քանակութեամբ , կամ , որպէս կըսեն ճաշարաններու մէջ , ամաղջ բօրսիօն : Զուր , կրնայ դորձածուիլ կամ ոչ , շուրջ նշանակութիւն չունի այս մարդկային շրջեղէլին մէջ :

**Հրամէք կամ նախընթրի**

Երեկոյեան ընթրիքէն առաջ հացկերոյթ մ'ալ կայ , որ կը կոչուի հրամէք կամ նախընթրի : Ոմանք՝ ախորժակէ զուրկ մարդիկ , փխայօղազուրիւն կանուանեն զայս , այլ Գիողինէն՝ որ ախորժակի մասին հետեւելի օրինակ մը կրնան ըլլալ . մաքրապօղազութիւն կը կոչէ : Այս ճաշին ժամանակ ամեն քաջութիւն ցոյց տալու է . վայ անոր որ այս միջոցին քաջամարտիկ ստամոքս մը

չներկայացնէր համազամ կերակրոյ ի ներկայութեան , այնպիսին կարսուած է տու յաւէտ , աւաղ երկու օրէն պիտի մեռնի նա յանկարծամահ . և խեղճ բժիշկներն այդ դէպքին մէջ պիտի տեսնեն կամ տեսնել կարծեն ծանր հիւանդութեան մը ենթակայութիւն , սերնդական հիւանդութեան մը , ինտիւստինս մեռեալին ծնողաց :

Այս ճաշի միջոցին , բաւական կը համարինք այոջտի ըսել , պէտք է ուտել զերեկուան ճաշին կրկինը :

Ստամոքսը առածգական լինելով կրնայ ընդարձակիլ . տակաւին ինչ չկլերու բաներ կան , որ պտտխմաղիրք կը յաջողին կլեցնել : Ստամոքսի այս բնախր յատկութիւնն փթացնելու չէ , մեծագոյն ճարտարութիւնը՝ առիթէն օգուտ քաղելուն է :

**Ընթրիք**

Ընթրեաց ժամանակ , ամեն բան լմնալու է , սեղանին փշրանկներն անգամ , սխակաց մէջի դոյզն մտացորդներն իսկ . ահա հոս է նրկատելի կէտը . ընթերցող , գուցէ չիրցիր դուշակել զայն , բայց ակներեւ է խնայողասիրութիւնն : Այս կերպով տեղի չմնար սեղանին փշրանքներըը հաւաքելու անօգուտ աշխատութեան , և պնտկները լուալու համար՝ աճառի , ջրոյ , և շուրջ տարցնելու համար աժուխի : Եւ այս ճաշէն յետոյ անմիջապէս պառկելու է , որովհետեւ խօսիլ , նրսախլ , պարել կամ պտտիլ յոյժ

Ֆրատակար են արդէն թիչ շտա  
յողնած ստամբսի մը համար, թե-  
պէտ ամբողջ օրուան մէջ կերուածն  
օյսպէս աննշան բաներ բլլան :

Բայց չքսինք թէ ինչ կերու-  
կութ ուտելու է ընթերեաց միջոցին :

Գիտէք անշուշտ որ ամենէն  
փառասոր ճաշը ընթերիքն է, ամե-  
նէն տկար ստամբս ունեցողն՝ բան  
մը աւելի կուտէ այս միջոցին և ինչ-  
պէս մեր առողջարանու թիւնն կա-  
րենար անյիշատակ անցնիլ այս ճա-  
շին :

Ոմանք կը կարծեն թէ բուռը  
տրուած դառնուկ մը կը բառէ : Ե-  
թէ արդարեւ այդպէս բլլար, ապ-  
րիլը՝ խաղաղիկ պիտի դառնար : Ո-  
մանք կրսեն թէ, երկու գառնուկ  
ուտելու է, ոմանք ալ այս երկու  
գառնուկին վրայ քանի մը սխալ  
ուրիշ կերակուրներ ալ կուտցնեն :

Եղան կարծողներ որ պնակ-  
ներն ալ ուտելու է, բայց այս վերջ-  
նոց կարծիքը՝ մենք չտիազանցու-  
թիւն կը համարինք, շտտակերու-  
թիւնը ամեն ազգաց մէջ ընդուն-  
ուած է թէ ֆրատակար է, սոցպի-  
սի բան մը չենք հրամայեր մենք :  
բայց հարկ է որ ստամբսին դէմ  
եղած այս կուոյն մէջ յարձակումը  
սոսկալի բլլայ, ի կամ յաղթելու է  
կամ յաղթուելու :

Մեծն Ալեքսանդր պոլթեցաւ  
բայց ատիկայ պարտութիւն մը չէր  
իրեն համար « քանզի ահա կը ծնի  
իւր գերեզմանէն Գիող իննան առող-  
ջարանութիւնն » :

Առանց աւելի Վերկարելու այս  
յօդուածն, որ արդէն ձանձրացու-  
ցիչ եղաւ, դընդունիմք ընթերեաց  
միջոցին՝ բուռը տրուած երկու գառ-  
նուկ ուտելու գրութիւնը՝ մէկ մար-  
դու համար : երեք ուտելու գրու-  
թիւնը՝ երկու մարդոց համար, զի  
միութիւնը զօրութիւնն է :

Արդ՝ այս առաջին դասն կա-  
ւարտենք, կար և կարողութիւն  
մաղթելով մենք մեզի յաջորդ գա-  
սերուն համար :

### ԶՈՒՍ.ՐՃԱԼԻՔ

Պարոն մը յետ երկարատեւ  
հիւանդութեան՝ սպաքինման ճամ-  
բուն մէջ մտնելով, որ մը զինքը  
խնամող բժշկին կը հարցնէ :

— Ի՞նչպէս կրցայ՝ ապրիլ այս-  
քան շարաթներ առանց բան մը  
ուտելու :

— Բժիշկը կը պատասխանէ : ո-  
րովհետեւ տենդը կը սնուցանէ ար-  
դէն :

— Իրա՞ւ կրսես, ուրեմն չենք  
կրնար անկէ ալ մեր ծառայից :

« Կերեւայ թէ ամեն երկրի մէջ  
ալ մի և նոյն բանն է, ծառայից շա-  
տակերութիւնն և տեսրոց ժրատու-  
թիւնը միշտ յառաջադէմ վիճակի  
մէջ են : »

# ՍԷՕԶ ՍԷՕԶՊԷԹ

Իբի ահպապ մէյխանէտէ պի-  
րազ սէրհօշլանսրքաան սօնրա ,  
պիրի պաշլար պիր կիւղէլ հիքեա-  
յէ նագլ իթմէյէ ,

Տիկէր աքքատաշը հիքեահէ-  
հազ իթաիկինտէն , սապահրսը պիր  
մէպլազ քէնտիսինէ պագշըշ վէրէ-  
ճէյինի վաա իտեր :

Սապահրսըն աքքատաշընը  
պուլուպ ագշամբի վատընըն իս-  
թէ իսթէ :

— Ճանըմ ագշամ պիր հայթ  
ըար իթտիք :

— Օ հայթը ագշամ իթմէտին  
շիմտի իթտին , սէյլէտի :

\* \*

Մատամանըն պիրի , քէնտի  
թանըարըր տէլիքանլընըն պիրի-  
սինտէն թածիզ օլույօրարը , իշի  
գօճասընա նաբլ իթտի :

— Օնտան գուրթուլմանըն չա-  
րէսի եօգ , հեր շէյէ ճէվապը վար  
սէօյլէտի :

— Նէ տէյօրօուն , օնա տիլլէ-  
րինի կէօսթէրմէլիսին , սէօյլէտի  
գօճասը :

— Կէօսթէրտիմ :

— Էյ 'նէ տէտի :

— Ինճու աիր աէտի :

\* \*

Որճաք պիր հապատա սէրհօ-  
շըն պիրի մէյհանէէ կիրէրէք , ա-  
նէլէ պիր սուրէթլէ :

— Շունսան պիր քօնեակ վէր  
պինա չօք սուսատրմ ,

Իշտիքտէն սօնրա թաթըր պիր  
սէտա իլէ :

— Շիմտի սուսանմամ կէշտի ,  
վէր պիր պիր տահա քէֆ իշիւն :

\* \*

Օրէրա թէաթրօսունտա , պի-  
րինճի բէրտէ թէքմիլ օլունտուք-  
տա , էհալի էլ վուրարաք թէք-  
րար օլընմարը թալէպ իտեր :

Սէյիրճիլէրտէն կպիրի քէնտի  
գօշուտունա սօրար :

— Գու կիւղէլ պիր օրէրա տէ-  
կիլ իտի , նիշիւն թէգրար իսթէ-  
յօրլար ,

— Չիւնքի քիմնէ պիր շէյ ադ-  
նայամստըրընտան զանն իտէյօր-  
լարքի իքինճի տէֆա օլունտուքտա  
ազնայաճադլար ,

---

## ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԵՆ - ԱՐԱՍ ԱՇՃԵԱՆ

---

Կ. ՊՈԼԻՍ ՏՊԱԳՐ. ԱՐԱՍ ԱՇՃԵԱՆ  
ԵՌՈՒՍՈՒՑԵԱՆ ԻԱՆ ՎԵՐԵ ՅԱՐԿ ԹԵՐ Ծ

معارف نظارت جليله سنك رخصتيله طبع اولتشد

نومبر ۵۶